

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԱՆԹԻԼԻԱՍ — ԼԻԲԱՆԱՆ

Անթիլիաս, 17 Մարտ 1980

Ամենապատիւ

Տ. Եղիշէ Արքեպս. Տէրտէրեան

Պատրիարք Հայոց Երուսաղէմի

Երուսաղէմ

Սիրեցեալ Եղբայր ի Քրիստոս,

Այսու գրով նախ պարտք կը զգանք յայտնելու Ձեզի որ յառաջիկայ Մայիսի 25ին, հանդերձեալ ենք կատարել Ս. Միլոնի օրհնութիւն Կաթողիկոսարանիս Մայր Տաճարին մէջ:

Պարտք կը զգանք միանգամայն հրաւիրելու Երուսաղէմի Պատրիարքական Աթոռը, որ հոգեւոր խնդութեան եւ հոգեկից օրհնութեան այդ օրը իր մասնակցութիւնը բերէր Ս. Միլոնի օրհնութեան արարողութեան, բարձրասիւնան հոգեւորականի մը ներկայութեամբ:

Վստահաբար Հայց. Եկեղեցւոյ անգլիկէի միութիւնը խորհրդանշող Ս. Միլոնի օրհնութեան արարողութեան Ձեր Պատրիարքական Աթոռի մասնակցութիւնը հոգեւոր ցնծութեան եւ միասնականութեան ամրացման գեղեցիկ առիթ մը պիտի հանդիսանայ մեր հաւասացեալ ժողովրդեան:

Սպասելով Ձեր եղբայրութեան դրական պատասխանին եւ մնալով միշտ աղօթող Ձեր առողջութեան եւ Երուսաղէմի Պատրիարքական Աթոռի դեղմունքէ պայծառութեան համար:

Աղօթակիցֆ

ԳԱՐԵԴԻՆ Բ.

ԽՈՐԷՆ Ա..

Աթոռակից Կաթողիկոս

Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ